

է պնդել որ ութ դար առաջ եղած հայոց անյայտ աղանդի շարունակողները այժմեան տան և իններորդ դարի հայ-բողոքականներն են, որոնց վարդապետութեան հոլթիւնը պ. Երեմեանը նոյնպէս չէ կարող բացատրել: Պ. Ամիրխանեան շատ ուղիղ է նկատել որ թոնդրակեցիները մասին մեզ յայտնի են հայոց գրութեան միայն այդ աղանդի բացատրական կողմերը, բայց դրական կողմերը յայտնի չեն և որ, առհասարակ, մարդկային պատմութեան մէջ ամեն նոր աղանդ միշտ անբարոյական է համարվել: Բայց ուրիշ կողմից ինքն Ամիրխանեան էլ մի սխալ է գործում. ուղեկցելով հաստատել որ թոնդրակեցիները ընդհակառակն բարոյական էին, նա հաստատում է այդ ճշմարտութիւնը իբր թէ Ներսէս Շնորհաւոր վկայութեամբ թոնդրակեցիների մասին: Բայց որքան մեզ յայտնի է, Ներսէսը ոչ թէ թոնդրակեցիների մասին է խօսել իր զբաղմունքների մէջ, այլ արեւորդիների, արեւապաշտների մասին:

Որքան էլ պ. Երեմեանի գեղեցումը թոնդրակեցիների մասին հետաքրքիր էր իր եզրակացութիւնների համարձակութեան կողմից, բայց գիտութեան տեսակետից այդ գեղեցումը, դժբաղդապէս, ոչինչ արժէք չունի, որովհետեւ գիտութեան համար գին ունի կամ լոկ փաստական հետազոտութիւնը, կամ հաստատ իրողութիւններից խիստ և որոշ պատճառական կապ ներկայացնող հետեւողական եզրակացութիւնը և ոչ թէ ֆանտազիա:

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԺ

Սեպտեմբերի 6-ին,
Երկար լուսնիկից յետոյ, կամենում եմ էլի

Այժմ վերադառնալով վերեւ դրած խնդրին— կատարեալապէս կարող ենք զաղափար կազմել այն թշուառ հետեւանքների մասին, որոնց կը բերեն մեզ այժմեան արած սխալները: Միթէ Անգլիայից պէտք է օրինակ առնենք:

Եթէ այդպէս մտածելու լինէին ուսանողները, նրանք ևս պէտք է քարոզեանք անէին իրանց գիւղերը. բայց իրանց բաղդից այդպէս չը մտածեցին և ամբողջ միլիոններ աղապտեցին անվերջ աղքատութիւնից: Եւ նշանաւոր է մի և նոյն ժամանակ այն բանը, որ այն գէպերում, երբ ուսու հասարակութիւնը զիջումներ է արել կալուածատիրական ցանկութիւններին, անգլիական հայեացքներին, նա մեծ սխալներ է գործել, մեծ անյարմարութիւններ է առաջացրել, որ այժմ 20 տարուց յետոյ ստիպված է նրանց ուղղել, մեղմեցնել, եթէ չէ այդ պատառուտած տեղերը արգելք են լինում և կանոնաւոր դարգացումը շարունակելուն:

Գժեղագէ է այն երկիրը և այն ժողովուրդը, որտեղ ընդհանուր օգուտը չէ դարձել և առանձին մարդու օգուտը և նոյնպէս ընդհանուր վընասը—իրաքանչիւրի վնասը: Այդպիսի մի կատարելութեան եթէ հասնել չենք կարող այժմ, գոնէ արհեստական կամ գիտակցական կերպով չը հեռանայինք եղածիցն էլ:—Եւ դրա համար մեծ ոյժ և բաշխութիւն չէ հարկաւոր. բաւական է անկողնաբար սիրել հայրենիքը, հայրենիքի մեծամասնութիւնը և սրա բարօրութիւնը—այն ժամանակ սիրտը կը թելադրի լաւն ու վատը:

Y

Սեփականութեան խնդիրը ամենաբաղադրիչ և խնձաված խնդիրներից մէկն է: Մինչև այժմ պարզված չէ սեփականութեան մասնաւոր և հասարակական նշանակութիւնը. նոյնպէս մութն են իւրաքանչիւր սեփականութեան իրան յատուկ հասարակական պարտաւորութիւնները: Եւ մի որ և է օրենսդիր, որ չէ ուսումնասիրել իրական կեանքի մէջ եղած յարաբերութիւնների ներքին էակն մասը, կարող է մեծ չարիք առաջացնել եթէ զբաղվի տեսական միակողմանի սկզբունքով:

Զորքինակ անգլիական կալուածատէրը կարողացաւ պաշտպանութիւն գտնել շատ իրաւաբանների կողմից, որոնք պնդում էին թէ նրա

մի փոքր խօսեմ, պատուական Մշակիւղ միջոցաւ իր ընթերցողներին հետ դարձեալ մշակ դասի վերաբերութեամբ, մշակների, որոնց անբաղդ զրուցեան հետ ծանօթանալու համար, բաւական է ունենալ մի սուր հայեացք և փափուկ խիղճ:

Նախը կորս կողմը, սիրելի ընթերցող, հետաքրքրվիր, թէ արդեօք ինչով են ապրում այդ խեղճ արարածները, ինչ արհեստով, ինչ գործով են պարապվում, որտեղ գիշերում, որտեղ ուտում և կամ ինչ քնում:

Մէկը թողած իր հայրենիք հեռու-հեռու տեղում, գեղեցիկում է օտարութեան մէջ, իր հայրենիքի և իր ընտանիքի կարօտը քաշելով. ով գիտէ յաջողութեւն է արդեօք մի փոքրիկ դրամ ձեռք բերել հաղոր չարաբանքից յետոյ, վերադառնալ իր հայրենիքը,—թէ թողնում է խեղճ ընտանիքը ճակատագրի կամաց, և օտար հողում գերեզման ստանում:

Միւսը իր անագին ծանր համէղը մէջքին, գլխէրը առանց մահճի անցուցանում է բաց երկնքի տակ. գոյութեան կուրծքը քշելով—ընդհեղ է այդ խեղճին օտար երկիր: Զարթնում է առաւօտը վաղ, երեսը մի աղբիւրում լուսնում, երեսը չըջում է իր սիրելի «աղօթարանը» և ալօթում, ձեռքերը բարձրացրած և նախախնամութեան դիմած: Բայց երկնքը չէ զրկում— և դուցէ դարձեալ կրկնում, «երեսիդ քրտնքով պիտի ապրես», բայց վաղ այն ապրուտին, որ զրկված իր սիրելիներից պէտք է անցուցանէ: Եւ այդպէս անցնում են օրեր, հետեւապէս ամիսներ և տարիներ, և վերադառնում է խեղճ մշակը դատարկ ձեռքերով իր ընտանիքի մօտ, և ինչպէս պէտք է հանդիպէ իր կնոջը և իր դստակներին. ֆիզիկական խախտված, նիհարացած և համարեա գերեզմանի մօտեցած:

Երկար կը քաշէ կարծեմ, եթէ շարունակեմ խօսել մշակների վրա, թողնենք և դառնանք մեր նիւթի վրա:

Այսօրվայ համար ես ընտրել եմ նիւթ ծխախոտագործներին, որոնք էլ մշակ դասին են պատկանում, ուրեմն և մշակներ են:

Մի ժամանակ ես էլ գտնվում էի ծխախոտագործների թւում, բայց առաջին շարաթի ճնշը

նկատեցի, որ ոչ մի ապականված օդ չէ կարող այնպէս խանգարել մարդու առողջութիւնը, ինչպէս ծխախոտարանի օդը: Բայց ստիպված էի 3 ամիս մնալ այդտեղ, որպէս զի գուցէ բազմադարձապէս աւելի լաւ ծանօթանամ այդ խեղճների դրութեան հետ:

Կենսական պայմանների մէջ ամենից վերը և առաջինը, պէտք է հաշուել ֆիզիկական ոյժը, կամ առողջութիւնը. բայց այստեղ ինչքան էլ զօռ տաս խեղճի, ինչքան էլ առողջապահական կանոններին հետեւն, դարձեալ 30—40 տարուց աւել ապրելը անհնարին է, այն էլ վաղ այն վերջի 7—8 տարիներում անցրած կեանքին. աւելի լաւ է ինքնասպանութիւնը, քան այդպիսի կեանքը, թէև այդ վերջինն էլ հետաքրքրական կէտից նայելով ճնշը ինքնասպանութիւն է, միայն զանազանութիւնը նրանումն է, որ առաջինը կատարվում է մի քանի տարիների միջոցում, իսկ վերջինը, յայտնի բան է, գուցէ յաջողվի մի ակնթարթում ևս կատարել, մտիկ տուած թէ ինչ միջոցաւ ևս ուղում վերջ տալ կեանքի: Ըստ իմ կարծեաց, ծխախոտագործութիւնը առողջապահական կէտից նայելով, ամենից վատ արհեստն է:

Երեւակայեցէք, որ մի քանի տարիներ սրանից առաջ, ամեն մի ծխախոտագործ ունէր իր սեփական կրպակը, ուր բացի ծխախոտից և ուրիշ ապրանք էլ ծախում էր: Անկարի և աղատ էր իր քէֆին, ինչքան կուզէր այնքան կը գործէր, իր պահանջի համեմատ. նա խոտը կտորոզն էլ էր, թուղթ կտորոզն էլ, ծխախոտ չինողն էլ, վերջապէս ամենը ինքն էր անում: Բայց հիմայ (գէթ Բազու այդպէս է) բոլորովին ուրիշ է. այժմեան ծխախոտարանը համեմատելով անցեալ կրպակների հետ, կատարվում մի բանն է ներկայացնում իր կազմակերպութեամբ:

Երեւակայեցէք մի չինումք, որի պատճառներով երկաթաթանկից գործած մի տեսակ ցանցով է պատած, որի ծակերով անց ու դարձ անել միայն կարող է ամենափոքրիկ հնարագէտ միջոցը. այդ ծակերով պիտի ներս խաղաղ օդը դաշխի մէջ, ուր գործում են մօտ 50—60 մարդ. ասենք որ ոչ թէ մի տեղ, այլ մի երկու սենեակների

է բաժանած: Մտէք ներս, տեսէք թէ ինչպիսի մարդիկ են գործողները. բոլորը հայ երիտասարդներ սկսած 8 տարեկանից և ոչ բարձր 35 տարեկանը, և ինչ սպասենք դրանցից: ոյժից ընկած,—գոյները թուած, մեռելապալ, և ինչ զարմանալի բան է որ 40 տարեկանից աւել չեն կարող ապրել այստեղ. նախ որ նստած կեանքը ինքնովին վատ է, երկրորդ որ այդքան մարդիկ իրանց նշառութեամբ օդը ապականում են, երրորդ՝ աւելացրու խոտի փոշին, որ թոքախտ, կրծքացաւ է պատճառում, և որ աւելին է օդը ազատ չէ կարողանում խաղաղ, որովհետև վանդակները արգելք են լինում օդախաղացութեան: Առաւօտ 6 ժամին սկսում են գործը, և 1/2 ժամ ճաշելուց յետ շարունակում են մինչ երկուրիսան ութը, կամ աւելի լաւ. ամած վաղ առաւօտեան սկսում են և մթնով վերջացնում: Միթէ գործարանատէրը իր օգտից կը զրկվի եթէ կը վարձէ աւելի շատ սենեակներ, և կամ գործելու ժամերը կը պակասացնէ, կարծեմ ոչ: Առաջինը ասեն ինչպիսի է, որովհետև տները թանգ են տալիս (մանաւանդ Բազուում), իսկ երկրորդը հնչում է, եթէ այդ պահանջը լցուցանենք, Գէթ բոլոր գործարանները հայերին են պատկանում, և մշակներն էլ հայեր են, և ինչքան մենք ճանաչում ենք այդ աղինը պարոններին, յոյս ունենք, մեր խօսքերը չեն լինի ճայն բարբառոյ յանապատի...: Մանաւանդ խորհուրդ կը տայինք հայ ծնունդներին, արհեստի մէջ ընտրողութիւն անեն իրանց որդիներին յանձնելու ժամանակ. արհեստը համամարդկային է, ինչո՞ւ ուրեմն միայն հայերը գործեն ծխախոտարանում և ոչ թուրքերը էլ, վրացիները էլ, ուսանին էլ: Բայց ես չեղուցի. շարունակեմ... Այդպէս չարաբութիւն էլ չէ կարողանում ունենալ. ճնշը ցաւալին էլ այդ է: Ամենալաւ ուսմիկը, որ ստանում են, օրական 2 բուրդից չէ անցնում, և այդ ստանողները ամեն մի գործարանում 2—3-ից չեն անցնում, մնացեալները չնչին ուսմիկ են ստանում. հետեւապէս միայն օրեկան ապրուստ են հայթայթում, ուր մնաց սև օրի համար փող ժողովելու: Ինձ շատ է պատանել երիտասարդ հասակում

տասնամեց դարձեալ զարմացմամբ կալուածատէրը.— անկարելի է:

—Ինչո՞ւ է անկարելի: Ո՞ւմն է հողը, միթէ քո սեփականը չէ:

—Ասենք թէ այդ հողը իմն է. բայց...

—Միթէ ձեր հողը դուք իշխանը չէք. ինչ ուղում էք կանէք:

—Այդ մեղանում ընդունված չէ. հողը թէև իմ սեփականութիւնն է, բայց ես իրաւունք չունեմ նրան խելու այն գիւղից, որ նրա մէջ ապրում է: Մեղանում այսպէս օրինակներ չեն եղած:

Կալուածատէրը երկար ժամանակ կիսապաշտ կանգնած էր և երեւմտապէս ինքն իրան խօսում էր.—միթէ կարելի է... յիշաւ ինչո՞ւ չէ կարելի... Իրաւունք չունեմ այդպէս անելու... պէտք է մտածել, պէտք է փորձել...

Ան օրտեղ է իրաւունքը: Տեսնում էք, ինչպէս խոր մտառնջվում է կալուածատէրը. նա լաւ զգում է, որ ինքը այդ հողի մասնաւոր սեփականատէր չէ. նա լաւ գիտէ, որ կան կապեր, որոնց խղել անկարելի է և որոնք— աւելացնենք մեր կողմից—պահպանվում են նահապետական կեանքի չը գրված, չը համակարգված, բայց այնու ամենայն իւրական նահապէս գոյութիւն ունեցող իրականութիւն: Ան անց օրեր իրաւունքը արհամարջվում էր հոռւակական իրաւունքով միտքված անգլիական և դրա նման իրաւաբանների կողմից: Կալուածատէրը կարող էր պաշտպանութիւն գտնել չորս կողմը, իսկ խեղճ գիւղերը որտեղից պէտք է պաշտպաններ և միջոցողներ ճարէին իրանց համար: Կարծեմ այդպէս էլ եղաւ: Աւտորիական կառավարութիւնը մի կողմից քաղաքական նըպատակով ցանկալով կալուածատէրերի զայրոյթը չը գոգրել, միւս կողմից լաւ չը գնահատելով ժողովրդական իրաւունքի էական կողմը— թող տուաւ կալուածատէրին իր ուղեցածը անելու: Ահա ձեզ քաղաքակրթութիւն:

Պարզ է, որ կալուածատէրը կատարեալ մասնաւոր սեփականատէր չէ և ուրեմն չէ կարող ինչպէս կամենայ, այնպէս էլ կարգադրել այն հողը, որը նրա իշխանութեան տակն է համարվում: Նա այդ հողի վրա վաճառականական ոչ մի իրաւունք չունի, քանի գիւղացին նստած է

այդ հողի վրա: Գիւղացին դարեւրով նստած էր և ոչ ոք իրաւունք չունէր նրան այնտեղից քշելու. եթէ ի հարկէ չը մոռացվէր այդ պատմական հասարակական իրաւունքը, որ թէև, կրկնում ենք, չէր գրված մագաղաթի վրա, բայց տպված էր անջնջելի կերպով հազարաւոր ժողովրդի սրտերում:

Կալուածատէրին ձեռնառու չէ «սրտի դավթարի» հետ գործ ունենալը և նա մոռանում է ժողովրդի իրաւունքը: Երբ հողը հրամայում են տալու գիւղացու, կալուածատէրը ամեն կերպ աշխատում է հողի գինը բարձրացնել, որչափ կարելին է: Եւ երբ փոքր ի շատ մարդատեր կարգադրութիւններ են կատարվում, աւելի մեղմ գնին են նշանակվում, կալուածատէրը գոռում գոռում է թէ նրան զրկում են, թէ նրա հետ անարդար են վարվում և բոլոր անսիրտներն էլ նրա ձայնը պահում են:

Սեփականութեան խնդիրը խնձաված է, երբ առանց ուսումնասիրելու սկսում են նրան ինքնահաւ կերպով հասկանալու և այդ բաւական չէ, գործնական փոփոխութիւններ մտցնելու: Այդպիսի խնդիրներից մէկն է և բէգական հաստատութիւնը Կովկասում: Երկար խօսելը այստեղ անկարելի է. աշխատենք մի երկու խօսքով ցայց տալ թէ որչափ սխալներ են կատարվել քանի էութիւնը չը հասկանալուց, կամ հասկանալ չը կամենալուց:

Բէգութեան ինչ լինելը—փոքր առ փոքր պարզվում է: Նրանք այն մարդը կալուածատէրեր չէին, ինչպէս առհասարակ ընդունում են այս վերջիններին: Նրանք խաների մօտ երկրորդական հպատակ կառավարիչներ էին, թէև իրանց ներքին գործերում բաւականին ինքնուրոյն: Բայց այդ կառավարչութիւնը ունէր ժամանակաւոր մի բնաւորութիւն, այնպէս որ բէգը կարող էր փոխվել և նրա տեղը կանգնել մի ուրիշը: Բէգը արդիւնք էր ստանում և այն առանձին նրան յատկացրած կտոր հողից, որ մնում էր զատ գիւղերից և մշակվում էր նոյն իսկ գիւղացիների միջոցով:

Ինչպէս և լինէր բէգութեան նախկին էութիւնը—խաների նշանակութիւնը կորչելուց յետոյ—բաւականին փոխվեց: Բէգերին ընդունեցին կալուածատէրերի տեղը, իսկ այդ կալուա-

մեծնորդներ տեսնել, և հենց մօտիկ բարեկամ և ծանօթներ մօտ 8 մարդ, որոնք եղել են երկուստեքը, և որոնց մեծնորդը յետ ծնող-ընտանիք թողել են մեծ խղճութեան մէջ:

Որովհետեւ ես հետաքրքրւում եմ, խորհուրդ եմ տալիս՝ բոլոր հայերին թողնել այդ կորուստական արհեստը, և մի ուրիշ արհեստ, գործ գտնեն, որ համեմատաբար լաւ կը լինի, քան ծր-խախտագործութիւնը:

Ուրախ եմ, որ յաջողվեց մի քանիսին գրգռել որ թողնեն իրանց վատ արհեստը:

Մտաքայլ ծնողներին խորհուրդ տալու, որ բացի այն որ ֆիզիկական փշանում են, կը փշանան և բարոյապէս, որովհետեւ ամեն մէկը, ինչպէս յոյս ունենալ խոստովանող ինձ հետ, որ ծխախտագործներու սարսափելի անբարոյականութիւն է տիրում, որ ոչ մի տեղ այնպէս առաջադիմութիւն չէ արել անբարոյականութիւնը, ինչպէս այդտեղում:

Ծնորդակութեամբ յայտնում եմ որ իմ նա-մակս առանց ուշադրութեան չը մնաց հայ գոր-ծարանատէրերի կողմից. ինչպէս լսում ենք պ. Մարտիրոսեանը աշխատում է հայերի վրա աւելի ուշադրութիւն դարձնել. յոյս ունենալ պ. պ. Մարտիրոսեան և Ամիրեան ևս վերջ կը տան իրանց անտարբերութեան:

Ալեքսանդր Աբելեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յօդուտ «Ժողովուրդ» թերթի ստացանք պ. Վ. Մուրադեանից 8 թուրք և պ. Ա. Մելիք-Աղաբաշից 8 թուրք: Առաջվայ փողերի հետ կանի 1,084 թ. 50 կ.:

Ստացանք պ. Ն. Մատուրեանից նրա ձեռքով յօդուտ «Միացեալ ընկերութեան» ժողոված 51 թուրք 20 կոպ:

Ուրբաթ օր, սեպտեմբերի 18-ին, ուղարկեցինք Կ. Պոլիս 2,300 թուրք պ. Մուրադեանի

ծառայութիւնը հաստատելու համար բաւական էր մի որ և է հին թուրք խաների ժամանակից, իբրեւ խաների պատուիրանք և հրովարտակ: Այդ տեղից սկսվում են անթիւ շարագործութիւններ, խաբարայութիւններ, որ չեն քննված կատարե-լապէս և մինչեւ այժմ: Կարելի են համարվում այնպէս դէպքեր, երբ մի քանի գնում է գիւղից մի կտոր հող և յետոյ մի կերպ բեզուութիւն ձեռք բերելով իրան կալուածատէր է կոչում և գիւղերի վրա իշխող... իսկ կեղծ հրովարտակներ գրելու գործին օգնողներ միշտ կան, զորօրինակ զանազան շահատէր մօլլաներ: Մանրամասն նիւթեր և ձիւտ տեղեկութիւններ չունենք բէ-լանական վրա մինչեւ այժմ. մինչդեռ բեզուական լուծածողովի գործունէութիւնից արդէն շատ բան կարելի էր քաղել: Եւ հենց դա է մեր թշուառութիւնը, որ ոչ մի բանի վրա նիւթ չունենք ժողոված և պատրաստած: Եւ ի հարկէ մեր գիւղացին կը պատժվի մեր տղիտութեան պատճառով:

VI

Մենք ասում ենք, որ մեր կալուածատէրերը պէտք է աշխատեն աւելի մարդասէր լինել հողային վճարատութեան գործում, քան ուրիշ տեղերին: Այդպէս լինելը պահանջում է պատ-մութեան փորձը և արդարութիւնը. այդպէս պա-հանջում է այն հանգամանքը, որ մենք նրան-ցից ուշ ենք այդ գործին ձեռնարկում:

Բայց ովքեր են կողակտեան կալուածատէրերը, որոնց մարդասիրական զգացմունքի վրա ենք յոյս դնում:—Հենց փոքր ի շատէ երեսը նրա մէջ այն ազատամիտ ուղղութեան մի մասը, որ իր ժա-մանակին բարձրագոյն պաշտպանում էր ռուս կա-լուածատէրերի լաւագոյն մասը: Որինակ են ու-ղում.—ինչու այդպէս օրինակ ոչ մէկը դրան-ցից չէ կամենում առնել, կալուածատիրական դասի մէջ երևացած մարդիկը ոգեւորված էին ժողովրդի բարօրութեան գաղափարով, որ ի-րանք պատրաստ էին ամենակերպ զոհեր տա-նելու, և զուր տեղը չեն նրանք զարդարում ի-րանց երկրի նորագոյն պատմութեան այն սքան-չելի երեսը: Այդ մարդերն են՝ ժողովուրդը և զրաւանութիւնը յիշում է և դեպի նրանց ու-նեցած յարգանքը ոչ մի բան աշխարհումս չէ կարող խախտել:

առեւտրական տան միջնորդութեամբ: Նշանակե- ուղարկեցինք նոյն տան միջնորդ և ներքին փո-խառութեան այն ամուսնակ որ նուիրել էր Միա-ցեալ ընկերութեանը պ. Եղիազարեան:

Հինգաթիւ, սեպտեմբերի 17-ին հայոց թատ-րոնական կոմիտեար տունը Պալմի թատրոնում մի հայերէն ներկայացումն ի պատիւ հնագիտա-կան ժողովի անդամների, իսկ հետեւալ օրը, սեպտեմբերի 18-ին քաղաքը տունը Թիֆլիսի ժողովարանի այգում մի ճաշկերոյթ նոյն հնա-դիտական ժողովի անդամներին: Այդ ճաշի ժա-մանակ արտասանած ճառերի մեծ մասը ցան-կութիւն էին յայտնում որ Թիֆլիսում հիմնվի համալսարան:

Մեզ գրում են ԳՈՒԹԱՍԻՍԻՅ հետեւալը: «Ճաշկերոյթի ժամանակ, որ արկեցաւ մեր քա-ղաքի կողմից հնագիտական ժողովի անդամնե-րին, բաղմամբ ճառեր ասվեցան, որոնց թուում ամենանշանաւորը երևելի ռուս պատմաբան Իլովայսկու ճառն էր, որի մէջ նա ցանկութիւն յայտնեց որ չուտով հիմնարկվի մի համալսար-ան Թիֆլիսի մէջ:

Ստացանք յօդուտ «Ժողովուրդ» թերթի 20 թուրք հետեւալ անձնութիւնից: Հայրապետ Աւետիսեանց 2 թ., Վահան Անտոնեանց 2 թ., Յակոբ Յակոբեանց 1 թ., Գալիթ Գալիթեանց 1 թ., Կարապետ Խանդավազեանց 2 թ., Յովսէփ Ա-նադեանց 2 թ., Սողոմոն Օսանեանց 1 թ., Վա-հան Յովսէփեանց 1 թ., Սերգէյ Բազադեանց 1 թ., Յովհաննէս Ասլանեանց 1 թ., Յակոբ Քեան-դարեանց 2 թ., Նալաֆ Եսայիս օղլի 1 թ., Իբրահիմ Էֆենդի օղլի 1 թ., Պ. Քոչարեան 1 թ., Զարմայր Արմանեանց 1 թ.: Ընդամենը 20 թուրք: Նշանակում է շատ որ բացի հայերից, նուիրատուներ թուում կան և մահմետական-ներ: Ուրեմն առաջվայ փողերի հետ կանի 1,104 թուրք, 50 կոպէկ:

Յօդուտ «Ժողովուրդ» թերթի ստացանք 4 թուրք պ. Միքայէլ Սաղաթէլեանից, Առաջվայ փողերի հետ կանի 1,108 թուրք 50 կոպէկ:

Ուր եւ մեր մէջ այդպիսի կալուածատէրերը, որ իրանք առաջինը խօսեցին-առաջարկեցին ա-ւելի լաւ, ժողովրդի համար աւելի յարմար հո-ղային յարաբերութիւններ:

Ինչու ենք այդ պահանջում կալուածատէրից, երբ աւելի անաշուտ գործունէութեան ընդու-նակները լուռ ու խուռ են մնացել մինչեւ այժմ —մեր խօսքը մեր իրաւաբանների վերաբեր-մամբ է: Դա քիչ աններելի տնտրաբերութիւն է, որ երեւում է նրանց կողմից այսպիսի կարե-ւոր խնդիրներում: Եւ երբ պէտք է նրանք խօ-սեն, էլ որ օրվայ մի թողել նրանք իրանց գի-տութիւնը և ճարտարութիւնը: Ուր է նրանց մեր երկրի խոր ուսումնասիրութեան արդիւն-քը:

Քնած են մեր իրաւագէտները խոր քնով. նը-րանք, արդէն այդպէս քննցին, երբ մեր մէջ դատաստանական նորոգումները մտնում էին շատ ուրիշ խնդիրների հետ. այժմ քնում են կալուածական խնդիրները, էգուց էլ մի ուրիշ և այլն: Գուցէ կը զարթնեն այն ժամանակ միայն, երբ ամենազգաւոր գործը կատարված կը լինի և լաւ թէ վատ վերջացած:

Իսկ ինչ ասենք մեր մի տեսակ ազգասէրնե-րին, որոնք հոգաբարձական մասը խնդրեցան-րի, երկու կօպէկ նուէրի վրա հազար յօդուած-ներ են գրում, որոնք մի թատրոնական ներկա-յացման մասնակցելը համարում են հայրենասի-րական մի հերոսութիւն, որոնք մի խնձոյ-քում խօսացած մի դատարկ ճառը ընդունում են, իբրեւ ազգային մի խորհրդաւոր պատգամ-խօսութիւն:— և ոսկայն լուռն են ամենամա-թալի լուռութեամբ, երբ վճռվում է մեր ժո-ղովրդի ամենակենսական խնդիրներից մէկը, երբ հատարական ուշադրութիւնը պէտք է գրաւ-ված լինի այդ առարկայով մինչեւ ամենանոյր մանրամասնութիւնները:

Խեղճ բառեր.—հայրենասիրութիւն, ազգասի-րութիւն: Որչափ մանր, նեղ և դատարկ նշանա-կութիւն էք ստացել դուք մեր առօրեայ կեան-քում: Ամեն մի հասարակ, ամեն մի տարրակա-մարդկային պարտաւորութիւն միմյուրին է ձեր անուշտը և պահանջվում է չընկալաւորներից ա-ռանձին յարգանք:

Կիւղական հողային խնդիրը ազգի ամբողջու-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԵՐՄԱՍԻԱ

Սէն-Գիէի մէջ միմիտրեանազահ Ֆերրի մի ճառ արտասանեց, որ հրատարակվեցաւ և քննվում է բոլոր լրագիրների մէջ: «Temps» լրագրի կարծիքով Թիւ Ֆերրի իր ճառով պատրաստակալութիւն է յայ-տնում անդ տալ նոր միմիտրեանեան, որ կը կազմէ հանրապետութեան նախագահը Ֆրանսիական ազգային ժողովների բացվի-լուց յետոյ: «Journal des Debats» լրա-գիրը ասում է, որ Թիւ Ֆերրի կատարեալ-պէս համապատասխանում է լրագրի քաղա-զած չափաւոր քաղաքականութեանը: Այդ լրագրի կարծիքով Թիւ Ֆերրի մի քայլ ա-ռաջ գնաց, իսկ Գամբետա մի քայլ յետ գնաց, նրանք երկուսն էլ հանդիպեցան մի-մեանց և կարող են ձեռք ձեռքի տուած առաջ գնալ, զգուշութեամբ չափաւոր վե-րանորոգութիւններ մտնելով երկրի մէջ: Արմատական լրագիրները յարձակվում են Ֆերրի վրա և ծագրում են նրա ինքնահա-ւան ընթացքը: Միմիտրեան ճառը ինքն ըստ ինքեան նշանաւոր չէ: Բացառելով ժողովր-դի առաջադիմութիւնը, նա մտնացողք ե-ղաւ զիւղական և քաղաքային ազգաբնակչու-թեան մօտենալու վրա քաղաքական հաս-կացողութիւնների և ձգտումների վերաբե-րութեանը: Հանրապետութիւնը իր կողմը դարձրեց պահպանողական երկրագործ դա-ւը իր հիմնարկութիւնների հաստատու-թեան և ընդհանուր հանգստութեան շը-նորհիւ: Այդ պատճառով շնորհալուծութեան արժանի են խելացի չափաւոր գործիչները: Ֆերրի խառնութեամբ յարձակվեցաւ արմա-տականների վրա, որոնք համարձակվեցան ցելի զցել ու թէ միայն պատուական հրապարակաւոր, այլ և իր հայրենիքին ահապին ծառայութիւններ մատուցանող ե-րեւելի քաղաքացու վրա: «Այդ խօսքերը, ո-րոնք Գամբետային էին վերաբերում, աղմը-կալի ծափահարութիւններով ընդունվեցան: Ի միջի այլոց իր ծառի մէջ Ֆերրի ասաց, որ նա խօսում է ոչ թէ իբրեւ միմիտրեանա-

խազահ, այլ իբրեւ հասարակ պատգամաւոր և որ նրա խօսքերից քաղաքական եղա-կացութիւններ անկարելի է անել, որովհե-տեւ ազգային տնօրինութիւնը կատարեալ-պէս կախված է հանրապետութեան նա-խագահից: Այս խօսքերը շատ նշանաւոր են, որովհետեւ նրանք ապացուցանում են, որ ինքը կառավարութիւնը անհրաժեշտ է համարում միմիտրեան փոփոխութիւնը և որ մինչեւ ազգային ժողովների գումար-վելը նոր միմիտրեան կը կազմվի Գամ-բետայի նախագահութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 18 սեպտեմբերի: Պետա-կան բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 թ. 75 կ., երկրորդ 94 թ., երրորդ 94 թ. 12 1/2 կ., չորրորդ 93 թ. 62 1/2 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տուճ սակը արժէ 226 թ., երկրորդ 220 թ. արեւ-ելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 թ. 25 կ., երկրորդ 91 թ. 25 կ., երրորդ 91 թ. 25 կ., օսի 7 թ. 63 1/2 կ.: Ռուսաց 1 թ. 1օնդոնի վրա արժէ 26 պէնս, Ամստերդամի վրա 131 պէնս, ռուսաց 100 թ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 62 պֆ., ֆարդի վրա արժէ 274 Ֆրանկ 75 ամս-տիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ, 19 սեպտեմբերի: Բար-ձրագոյն հրովարտակով կուն Ալեքսեբեք ա-ւագին շնորհված է արձակելով զարդար-ված կայսր Ալեքսանդր երկրորդի պատկե-լը: Սենատին առաւ հրամանով սեպտեմ-բերի 3-ից Վալդիօթօսի նշանակված է կայսերական թատրոնների ղեկավար: Ժո-ղովրդական լուսաւորութեան միմիտր Բա-րոն Նիկոլայ վերագարձաւ սեպտեմբերի 16-ին:

Կ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Կարինից սեպտեմբերի 16-ից հայորդում են, որ Չա-նարի շրջականներում երկրաշարժ է եղել: Շատ տներ և միմիտրներ քանդված են: 12 մարդ սպանվել են:

Խմբագիր.—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

միմիտրեան, նուրբ հասարակական զգացմունք, եթէ ոչ մեր առօրեայ թեթեւալի ազգասիրու-թիւնով մենք կարող ենք ազգային շատ բա-րիքներից զրկվել մեր ազգային խառն-հոգեւոր պատճառով: Կարեւորական խնդիրը վերաբերում է և ուսումնասիրական և վանքա-կան հողերին և մենք ապացուցենք ունենք, որ վերջին ժամանակներս վանքերը վանահօրների անմտութիւնից—զրկվել են հողի մասերից:

Եթէ կալուածական և դրա նման խնդիրների գրականական կերպով քննադատութիւնը անկա-լուց ևս լինի ազգային խառնութիւնը անկա-կան շրջանների վրա, այնու ամենայնիւ դա ա-մենայնպէս միջոցն է գիտակցաւոր վերաբե-րել սովորելու կարծիք խնդիրներին: Հասարա-կութիւնը կը զարգանայ այդ քննադատու-թեամբ, կը խօսի այն ու այն անկիւնում: Այդ ընդհանուր խօսքի ձայնը կը զրկվի և մեծին և փոքրին և նոր իրաւաբանական մասնագիտու-թիւն ուսումնասիրողները կը հետաքրքրվեն այդ խնդիրներով, կը պատրաստվեն աւելի օգտաւէտ մարդիկ լինելու իրանց ժողովրդի համար, պաշտ-պանելու նրա իրաւունքները: Պատանի տնտե-սագէտը, գիւղատնտեսը նիւթեր կառնում իրանց հայրենիքի կեանքից և կը զարգանան ու կու-տանեն աւելի խելացի ու գործնական կերպով: Եթէ խոր ուսումնասիրութիւնը կարողացաւ ցայց տալ արած վերանորոգումների լաւ և վատ կող-մերը, կարողացաւ նկատել և գուշակել հետեւ-ւանքները՝ նա կարող է օգնութիւն հանել, որ-չափ կարելի է չուտ տուրքով լրացնել պակա-սորդը, վերջինը աւելորդը, վնասակարը: Եւ չէ կարելի, որ խոր ուսումնասիրութեան վրա հիմն-ված առաջադիմութիւնները անուշադիր մնան առ միշտ. շուտ թէ ուշ նրանք իրանց արժանին կը ստանան:

Որչափ շուտ սկսենք ուսումնասիրութիւնը, այնչափ լաւ:

Ուսումնասիրութիւնից դատ ուրիշ խելացի ելք չը կայ թշուառութիւններից և ընդհանուր տա-ռապանքներից: Ուսումնասիրութիւն և զարգա-ցած հասարակական խղճմտանք:

Մօսկվա

Ա. Գալանթար

